ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐՇԱՄՅԱՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳԻ

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 330-387 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բաղալյան Գեղամ Միհրանի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Եղիազարյան Արման Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մելիքյան Արթուր Տիգրանի

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. հուլիսի 17-ին, ժամը 13^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. հունիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ **Մուրադյան Հ. Ղ.**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության գիտական նշանակությունն ու արդիականությունը: Հայոց պատմության զարգացման կարևոր շրջափուլերից է Արշակունիների դարաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության անցուդարձերի ուսումնասիրությունը: 330-387 թթ. հայ Արշակունի գահակալների արտաքին և ներքին քաղաքական ձեռքբերումները և ձախողումները տարբեր պատմական ժամանակաշրջաններում ընկալվել են նորովի՝ պայմանավորված և՛ ժամանակի պահանջներով, և՛ հետազոտողի սուբյեկտիվ աչառու վերաբերմունքով: Հետազոտողները, վերանայելով Ամմիանոս Մարկելինոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և այլ պատմիչների հաղորդումներն ու նրանց տված գնահատականները հայոց թագավորների մասին, փորձել են նոր լույսի ներքո քննել ու բացահայտել վերջինների վարած արտաքին և ներքին քաղաքականությունը, ինքնուրույն պետություն կառուցելու ծրագրերը: Չնայած այն հանգամանքին, որ տարբեր ժամանակաշրջաններում այս հիմնահարցի վերաբերյալ բավական գրվել է՝ կարծում ենք, որ դրա ուսումնասիրությունը և պատմագիտական վերլուծությունը ոչ միայն չի կորցրել իր գիտական նշանակությունը, այլև շարունակում է մնալ արդիական: Անշուշտ, այսօր էլ առկա են խնդիրներ, որոնք պատմագրության մեջ հակասական գնահատականների են արժանացել և ունեն արժևորման կարիք: Մասնավորապես, 330-387 թթ. հայոց թագավորության արտաքին քաղաքականության ոլորտում Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հետ հարաբերությունների լիարժեք պարզաբանումը, ինչպես նաև ներքին քաղաքականության ոլորտում պետական իշխանության ամրապնդման համար մղված պայքարը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է պատմագիտական մեթոդներին համահունչ բացահայտել և լուսաբանել 330-387 թվականներին Հայաստանի դեմ ուղղված Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականությունը, այդ համատեքստում վերլուծել հայոց թագավորների վարած արտաքին և ներքին քաղաքականության առանձնահատկությունները, լուսաբանել կենտրոնաձիգ իշխանության ամրապնդմանն ուղղված ջանքերը, ինչպես նաև մատնանշել առկա հիմնախնդիրները և ուրվագծել դրանց հնարավոր լուծումները: Վերոնշյալ նպատակի իրականացման համար ատենախոսության առանցքում դրված են հետևյալ խնդիրները.

- բացահայտել Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության Հայաստանի նկատմամբ ունեցած նկրտումների և շահերի էությունը, պարզաբանել հայոց թագավորներ Խոսրով Կոտակի և Տիրան Արշակունու արտաքին քաղաքականության առանձնահատկությունները և կենտրոնաձիգ պետություն կառուցելուն ուղղված քաղաքականությունը, կենտրոնախույս նախարարների դեմ պայքարը և եկեղեցու ազդեցության թուլացմանն ուղղված քաղաքականությունը,
- վերլուծել հռոմեա-պարսկական բանակցությունները, և դրանցից բխող քաղաքականությունը, որը նպատակն էր հաստատել երկու հակառակորդներից որևէ մեկի գերակայությունը տարածաշրջանում: Այդ համատեքստում բացահայտել Արշակ Բ-ի վարած խուսանավման արտաքին քաղաքականությունը, պետությունն ինքնիշխան

դարձնելու փորձերը, ինչպես նաև պարզաբանել հարաբերությունները նախարարների և եկեղեցու հետ,

• վերլուծել Պապ Արշակունու օրոք հայ-պարսկական և հայ-հռոմեական փոխհարաբերությունների բնույթը, եկեղեցու անկախացմանն ուղղված քաղաքականությունը և նրա ձեռնարկած ներքին բարեփոխումները,

• վերլուծել 374-376 թթ. հռոմեա-պարսկական բանակցությունները, Վարազդատ Արշակունու և Մուշեղ Մամիկոնյանի, այնուհետև Մանվել Մամիկոնյանի միջև իշխանության ամրապնդմանն ուղղված սուր մրցակցության պատճառները,

• լուսաբանել Մանվել Մամիկոնյանի խնամակալության շրջանը, նրա քաղաքական ծրագրերը,

• բացահայտել Մեծ Հայքի թագավորության թուլացման պատճառները և ներկայացնել պետության 387 թ. բաժանումը,

• վերլուծել Արշակ Գ-ի և Խոսրով Վերջինի միջև պետական իշխանության ամրապնդմանն ուղղված պայքարը, վերջինիս թագավորության վերամիավորման ասպարեզում իրականացրած քաղաքականությունը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը: Ատենախոսության մեջ հետազոտվում է Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության ծավալապաշտական նկրտումները գերակայություն հաստատելու համար, հայոց թագավորության արտաքին հարաբերությունները երկու տերությունների հետ, կենտրոնաձիգ իշխանության ամրապնդմանն ուղղված ջանքերը և դրանց վերաբերյալ պատմագրության արտահայտած գնահատականները: Աշխատանքը ժամանակագրորեն ընդգրկում է 330-387 թթ.: Նշված ժամանակաշրջանն ընտրել ենք հատուկ նպատակով, քանի որ 330 թ. Տրդատ Գ Մեծի մահից հետո, երբ պատմական ասպարեզից հեռացավ Հռոմեական կայսրության հզոր դաշնակիցը, պարսկական տերությունն ավելի ակտիվացրեց իր քաղաքականությունն ինչպես կայսրության դեմ, այնպես էլ Մեծ Հայքի դեմ: Նաև 298 թ. Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո Սասանյան Պարսկաստանը ակտիվացրեց իր նվաճողական քաղաքականությունը Մեծ Հայքի նկատմամբ և հայոց թագավորությունը հայտնվեց դժվարին կացության մեջ, որն ի վերջո 387 թ. հանգեցրեց Մեծ Հայքի թագավորության անկմանը և մասնատմանը երկու տերությունների՝ Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության, միջև:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք վերլուծական, պատմահամեմատական և պատմաքննական մեթոդներով: Դրանց կիրառմամբ իրականացվել է փաստերի վերհանում, վերլուծում և ամփոփում, դեպքերի նկարագրություն ժամանակագրական, բովանդակային ու պատճառահետևանքային հաջորդականությամբ: Պատմագիտական գրականության վերլուծությունը կատարվել է՝ պահպանելով անաչառության սկզբունքը:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ներկա ատենախոսության շրջանակներում նորովի քննության են ենթարկվել 330-387 թթ. Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության շահերն ու Հայաստանի նկատմամբ նրանց ունեցած նկրտումները, պարզաբանվել են հայոց թագավորների

արտաքին և ներքին քաղաքականության առանձնահատկությունները: Լուսաբանվել են հայ-պարսկական հարաբերությունների վատթարացման պայմաններում Տիրանի և Արշակ Բ-ի կողմից վարվող արտաքին քաղաքականության հիմնական միտումները, որոնց նպատակն էր պահպանել հավասարակշռությունը երկու տերությունների միջև, ինչը, սակայն, հաջողություն չունեցավ: Ցույց է տրվել, որ Հովիանոսի անփառունակ վախճանից հետո, գահին տիրանալու լուրջ խնդիրների առջև կանգնած նոր կայսր Հովիանոսը, 363 թ. կնքեց «ամոթալի» հաշտության պայմանագիրը, որով տարածաշրջանում էապես խախտվեց հավասարակշռությունը հօգուտ Պարսկաստանի: Հռոմեական կայսրությունը, որը 330-360-ական թթ. Արևելքում վարում էր ակտիվ արտաքին քաղաքականություն, հետայդու, արտաքին և ներքին անբարենպաստ հանգամանքներից ելնելով, որդեգրեց պաշտպանողական մարտավարություն: Այդ իրավիճակում է՛լ ավելի խորացավ քաղաքական ճգնաժամը Հայաստանում՝ ունենալով ճակատագրական հետևանքներ: Հիմնականում նորովի են ներկայացվել Վարազդատ Արշակունու և Մուշեղ, ապա՝ Մանվել Մամիկոնյանների, ինչպես նաև՝ Արշակ Գ-ի և Խոսրով Վերջինի միջև մղվող սուր մրցակցությունն իշխանության ամրապնդման համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ նրա մեջ զետեղված արդյունքները կարող են օգտակար լինել հայոց միջնադարյան շրջանի պատմության հիմնահարցերով զբաղվող հետազոտողների համար՝ պատկերացում կազմելու ժամանակաշրջանի ուսումնասիրվածության աստիճանի և հետագա անելիքների մասին: Աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել 330-387 թթ. հայոց պատմության խնդիրներին նվիրված բուհական դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և դրական եզրակացությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են թվով յոթ գիտական հոդվածների տեսքով:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության հիմքում հայկական և հռոմեական աղբյուրներն են: Ուսումնասիրվող հիմնահարցի հետազոտման համար խիստ օգտակար է հայկական սկզբնաղբյուրներից Փավստոս Բուզանդի երկը: Այն հատկապես հարուստ է թեմային վերաբերող փաստառատ նյութով: Պատմիչը մանրամասն նկարագրել է հայոց թագավորների գործունեությունը, հայ-հռոմեական և հայ-պարսկական հարաբերությունները, պարսկական ավերիչ արշավանքները և հայ-պարսկական պատերազմները: Քննվող թեմայի վերաբերյալ հատկապես կարևոր են պատմիչի հաղորդած տեղեկությունները հայոց թագավորների եկեղեցու և հայ նախարարական դասի փոխհարաբերությունների մասին: Սակայն որոշ իրադարձությունների հետ կապված պատմիչը բարձրացնում է եկեղեցու և հատկապես Մամիկոնյանների դերը պետության ամրապնդման գործում: Դա պահմանավորված էր նրանով, որ պատմիչն իր

երկը շարադրել է V-րդ դ., երբ մեծ էր Մամիկոնյանների և եկեղեցու քաղաքական դերը հայոց միջավայրում[1]:

Ուսումնասիրվող հիմնահարցի հետազոտման համար խիստ օգտակար է Մովսես Խորենացու երկը: Պատմիչը հույժ կարևոր տեղեկություններ է հաղորդում Մեծ Հայքի Արշակունիների թագավորության արտաքին քաղաքական իրադարձությունների վերաբերյալ: Եզակի տեղեկություններ են արձանագրվել հայոց թագավորների և կաթողիկոսների գահակալության թվական տվյալների ճշգրտման և ժամանակագրության վերականգնման վերաբերյալ: Սակայն պատմիչի երկը, նույնպես լինելով V-րդ դ. արգասիք, որոշ դեպքերում ետ է մղում Մամիկոնյաններին՝ փոխարենը բարձրացնելով Բագրատունիների քաղաքական կշիռը[2]:

Արժեքավոր տեղեկություններով առանձնանում է Ղազար Փարպեցու երկը: Պատմիչը հանգամանալից ներկայացնում է հայոց թագավորության բաժանումից հետո քաղաքական իրադրությունը, հայոց թագավորներ Արշակ Գ-ի և Խոսրով Վերջինի գործունեությունը[3]:

Հետազոտության համար կարևոր են Ագաթանգեղոսի[4], Սեբեոսի[5], Մեսրոպ Երեց Վայոցձորեցու[6], Վարդան Արևելցու[7] և Թովմա Արծրունու[8] երկերը: Նրանցում զետեղված են հետաքրքիր թվական և փաստական տվյալներ, որոնք օգնում են հետազոտության որոշ հիմնահարցեր պարզաբանելու համար:

330-387 թթ. Հայաստանում ծավալված քաղաքական իրադարձությունների վերաբերյալ հայ և օտարալեզու պատմիչների կարևորագույն վկայություններ են զետեղված «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» երկրորդ հատորյակում[9]:

---

[1] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Մալխասյանցի, Երևան, 1987:

[2] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ս. Մալխասյանի, Երևան, 1981:

[3] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982:

[4] Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983:

[5] Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, 1979:

[6] Մեսրոպ Երեց, Պատմութիւն վարուց եւ մահուան երանելի առն Աստուծոյ Սրբոյն Մեծին Ներսէսի, Կ. Պոլիս, 1737:

[7] Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և աստղամիշերով ծանոթագրությունը Գ.Բ. Թոսունյանի, Երևան, 2001:

[8] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության նախապատրաստեց Վ. Վարդանյանը, Երևան, 1985:

[9] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը, կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Երևան, 2011:

Հռոմեական սկզբնաղբյուրներից օգտվել ենք պատմիչ Ամմիանոս Մարկելինոսի երկից[10], Հուլիանոսի ճառերից[11], Բարսեղ Կեսարացու նամակներից[12] և Պրոկոպիոս Կեսարացու երկից[13]: Ամմիանոսը, լինելով IV-րդ դարի 50-ական թթ. հռոմեա-պարսկական պատերազմների ժամանակակիցը և անմիջական մասնակցելով 359-363 թթ. ռազմական գործողություններին, մանրամասն նկարագրել է այդ պատերազմները, Հռոմի և Պարսկաստանի արտաքին քաղաքականությունը: Թեմայի վերաբերյալ տեղեկությունների շարքում արժեքավոր է 363 թ. պայմանագրի, հայ-հռոմեական հարաբերությունների, Արշակ Բ-ի և Պապի կառավարման շրջանի առանձին իրադարձությունների նկարագրումը: Նա շատ դեպքեր և իրադարձություններ նկարագրել է ականատեսի աչքերով:

Հուլիանոսն իր ճառերում հաղորդում է կարևոր տեղեկություններ Կոստանդիանոս I-ի մահից հետո կայսրությունում տիրող խառնակ իրավիճակի, ինչպես նաև Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո Սասանյան Պարսկաստանի կողմից ռազմական գործողությունների վերսկսման, դրա հետևանքով Արևելքում տիրող արտաքին քաղաքական բարդ իրադրության և հայ-պարսկական կռիվների վերաբերյալ:

Հայ-հռոմեական հարաբերությունների պարզաբանման և կաթողիկոսական աթոռի շուրջ մղված պայքարի տեսանկյունից արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Բարսեղ Կեսարացու նամակների մեջ:

387 թ. Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև Մեծ Հայքի բաժանման հետևանքով հայոց թագավորության ունեցած տարածքային կորուստների և կայսրության կազմում ձևավորված ինքնավար սատրապությունների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Պրոկոպիոս Կեսարացու երկում:

Ընդհանրապես պատմագրությունը մեծ ուշադրություն է դարձրել Մեծ Հայքի Արշակունիների թագավորության 330-387 թթ. քաղաքական պատմության լուսաբանմանը: Այդ համատեքստում, վերոնշյալ ժամանակաշրջանի առանձին բաղադրիչներին անդրադարձները եղել են բազմաթիվ:

Թեմային նվիրված համակարգված պատմագրական աշխատանք կատարել է Մ. Չամչյանը իր «Հայոց պատմություն»[14] քննական աշխատությունում: Հեղինակն այստեղ վերլուծության է ենթարկել հրապարակի վրա առկա սկզբնաղբյուրները, համադրել

---

[10] Аммианъ Марцеллинъ, История, переводъ съ латинского Ю. А. Кулаковский и А. И. Сонни, выпускъ I, Киевъ, 1906, նունի՝ выпускъ II՝ переводъ съ латинского Ю. А. Кулаковский, Киевъ, 1907, նույնի՝ выпускъ III՝ переводъ съ латинского Ю. А. Кулаковский, Киевъ, 1908.

[11] The works of the emperor Julian, with on english translation by W. C. Wright, in three volumes, vol. I, Cambridge, 1913.

[12] Saint Basil, The Letters, with an english translation by R. J. Deferrari, in four volumes, vol. II, London, 1928.

[13] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ Ա, Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967:

[14] Չամչյանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հատոր Ա, Երևան, 1985:

դրանցում առկա փաստական տվյալները, ինչպես նաև, մի շարք իրադարձությունների վերաբերյալ դրսևորել քննական մոտեցում:

Պակաս արժեքավոր չեն Ա. Գարագաշյանի[15] և Ս. Պալասանյանի[16] աշխատությունները, որոնք ևս մեծ կարևորություն են ներկայացնում հայոց թագավորների վարած քաղաքականության հիմնահարցի ուսումնասիրման համար:

Մեծ Հայքի թագավորության 330-387 թթ. քաղաքական անցուդարձերի, հռոմեամետ և պարսկամետ ուժերի միջև առկա հակասությունների համակարգված ներկայացման գործում շնորհակալ գործ է կատարել Լեոն[17]:

Բարձր գնահատանքի է արժանի հատկապես Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» և «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատությունները[18]: Այս երկու աշխատությունները կարելի է համարել Արշակունիների դարաշրջանի վերաբերյալ գրված պատմագրության գլուխգործոցները: Այստեղ հեղինակը մանրամասն ներկայացնում է վերոնշյալ ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալական և տնտեսական պատմության հիմնահարցերը: Ամենևին չնսեմացնելով հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները, այնուամենայնիվ, հեղինակը մի շարք իրադարձություններ լուսաբանելիս շեշտը դնում է հունա-հռոմեական սկզբնաղբյուրների վրա: Ուստի, ատենախոսության գլուխներում անդրադարձել ենք հեղինակի արտահայտած տեսակետներին:

387 թ. Մեծ Հայքի թագավորության բաժանման, դրա արդյունքում ձևավորված քաղաքական իրադրության, Արևմտյան և Արևելյան Հայաստանի սահմանների ճշգրտման, մեծ քաղաքների ու ավանների տեղադրության վարչաքաղաքական իրավիճակի վերաբերյալ առանցքային նշանակություն ունի Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»[19] աշխատությունը:

Հայոց թագավորներ Արշակ Բ-ի և Պապ Արշակունու գահակալության շրջանի քաղաքական մի շարք հարցեր լուսաբանվել են Հ. Արմենի[20] և Ե. Մուրադյանի ուսումնասիրություններում[21]:

---

[15] Գարագաշեան Ա., Քննական պատմութիւն Հայոց ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց, մասն Գ, Թիֆլիս, 1895:

[16] Պալասանեան Ս., Պատմութիւն հայոց, սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, 1902:

[17] Լեո, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Երևան, 1966:

[18] Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մասն Ա, Արշակունիների հաստատումից Հայաստանում մինչև մարզպանության շրջանը (I-V դ.դ.), Երևան, 1957, նույնի՝ Ֆեոդալիզմը հին Հայաստանում, (Արշակունիների ու մարզպանության շրջան), Երևան, 1934:

[19] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987:

[20] Արմէն Հ., Մարզպանը և սպարապետը, Պէյրութ, 1955, նույնի՝ Պապ Արշակունի, Երուսաղեմ, 1958, նույնի՝ Փառանձեմ թագուհի, Վենետիկ, 1962, նույնի՝ Պատմական քննարկումներ, Պէյրութ, 1968:

[21] Մուրատեան Ե., Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն, Աղեքսանդրիա, 1900:

330-387 թթ. հռոմեա-պարսկական պատերազմների, Մեծ Հայքի թագավորության ունեցած դերի վերաբերյալ արժեքավոր են Հ. Աստուրյանի[22], Հ. Հարությունյանի[23] և Ն. Շահնազարյանի ուսումնասիրությունները[24]:

Վերնոշյալ ժամանակաշրջանի վարչաքաղաքական հիմնահարցերին առանձին հոդվածներով և ուսումնասիրություններով անդրադարձել է Բ. Հարությունյանը[25]:

Մասնավորապես, «Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի» աշխատության մեջ հեղինակը համակողմանի քննության է ենթարկել 387 թ. բաժանումից հետո ձևավորված վարչական միավորները, հանգամանալից վերլուծել է թագավորության գավառաբաժանումը: Իր հոդվածներում հեղինակը մատնանշում է ավատատիրական հարաբերությունների ունեցած ազդեցությունը տարբեր քաղաքական զարգացումների վրա, և ընդգծում Խոսրով Կոտակ, Տիրան Արշակունի, Արշակ Բ, Պապ Արշակունի, Խոսրով Վերջին գահակալների դերը կենտրոնաձիգ պետություն կառուցելու համատեքստում:

330-387 թթ. հայոց թագավորների և Մամիկոնյանների փոխհարաբերությունների ու վերջիններիս գործունեության գնահատման հարցերին իր հոդվածներում անդրադարձել է Ա. Վարդանյանը[26]:

---

[22] Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190 էն ն.Ք. մինչեւ 428 յ.Ք., Վենետիկ, 1912:

[23] Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թթ.), Երևան, 1945:

[24] Շահնազարյան Ն., Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ.թ.ա. VI-մ.թ. V դ.), Երևան, 1990:

[25] Հարությունյան Բ., Գահնամակի թվագրման հարցի շուրջը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1976, թիվ 2, նույնի՝ Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1976, թիվ 2, նույնի՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1977, թիվ 2, նույնի՝ Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1981, թիվ 6, նույնի՝ Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1981, թիվ 12, նույնի՝ Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-քաղաքական կացությունը 3-րդ դարի վերջին – 4-րդ դարի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1982, թիվ 2, նույնի՝ Մարդպետական և Անգեղտան գործակալությունները Արշակունյաց Հայաստանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1984, թիվ 4, նույնի՝ Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1988, թիվ 4, նույնի՝ Պապ թագավորը հայոց ազգային եկեղեցու հիմնադիր, «Գարուն», Երևան, 1994, թիվ 1, նույնի՝ Չունակը՝ հայոց կաթողիկոս, «Ավարայր», Երևան, 1999, թիվ 1(8), նույնի՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, մաս Ա, (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, նույնի՝ Միջավատատիրական պայքարի և հայոց Խոսրով Բ Կոտակ և Տիրան թագավորների կենտրոնաձիգ իշխանության ուժեղացման քաղաքականության շուրջ, «Գիտելիք», Երևան, 2004, թիվ 14, նույնի՝ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության բանակն ըստ «Ձորանամակ»-ի, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2012, թիվ 1, նույնի՝ Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016:

[26] Վարդանյան Ա., Մամիկոնյան տոհմը Տրդատ Մեծ և Խոսրով Կոտակ Արշակունիների օրոք, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2019, թիվ 2, նույնի՝ Մամիկոնյանների

Խնդրո առարկա թեմայի առանձին բաղադրիչներին անդրադարձ եղել է նաև ռուսական պատմագրության մեջ: 330-387 թթ. տարածաշրջանում Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի հակամարտության հիմնահարցի ուսումնասիրությունը բոլորովին էլ չի կորցրել իր արդիականությունը և շարունակում է մնալ պատմաբանների ուշադրության կենտրոնում: Այդ հակամարտության ուսումնասիրության մեջ առանձնանում են Ա. Կրիմսկու[27], Մ. Դյակոնովի[28], Վ. Կուզիշչինի[29], Ս. Կովալյովի[30] և Ս. Դաշկովի ուսումնասիրությունները[31]: Հեղինակները մանրամասն վերլուծում են Հռոմի արևելյան քաղաքականությունը և Պարսկաստանի ունեցած շահերը տարածաշրջանում:

Ատենախոսության համար առանցքային կարևորություն ունեն նաև արևմտյան պատմագրության մեջ լույս տեսած աշխատությունները: Պակաս արժեքավոր չեն նաև գերմանացի նշանավոր հայագետ Յ. Մարքվարտի[32] և արևելագետ Թ. Նյոլդեկեի ուսումնասիրությունները[33], որոնք ևս մեծ կարևորություն են ներկայացնում հայոց թագավորների վարած արտաքին և ներքին քաղաքականության մի շարք հիմնահարցերի լուսաբանման համար: Ուստի, ատենախոսության գլուխներում անդրադարձել ենք նաև այդ հեղինակների ուսումնասիրություններին ու նրանց արտահայտած տեսակետներին:

330-387 թթ. Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության Հայաստանի նկատմամբ ունեցած նկրտումների և տարածաշրջանում երկու տերությունների ունեցած շահերի էության մի շարք հարցեր լուսաբանվել են Տ.

գործունեությունը 338-368 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», Երևան, 2020, թիվ 2, նույնի՝ Մուշեղ Մամիկոնյանի գործունեության գնահատման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, թիվ 1, նույնի՝ Մանվել Մամիկոնյանը Մեծ Հայքի թագավորության խնամակալ և կառավարիչ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան, 2020, թիվ 1, նույնի՝ Մամիկոնյանները վերջին Արշակունիների օրոք, «Հայագիտության հարցեր», Երևան, 2021, թիվ 2(23):

[27] Крымский А., История Сасанидов и завоевания Ирана арабами, Москва, 1905.

[28] Дьяконов М., Очерки истории древнего Ирана, Москва, 1961.

[29] Кузищин В., История древнего Рима, Москва, 2000.

[30] Ковалев С., История Рима, Санкт-Петербург, 2002.

[31] Дашков С., Цари царей, Сасаниды: Иран III-VII ВВ., в легендах, исторических хрониках и современных иследованиях, Москва, 2008.

[32] Markwart J., Untersuchugen zur Geschichte von Eran, Heft I, Göttigen, 1896, նույնի՝ Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Studien zur armenischen Geschichte, IV, Wien, 1930, նույնի՝ Die Entstchung der armenischen Bistumer: kritische Untersuchung der armenischen Überlieferung, "Orientalia Christiana", Roma, 1932, Septembri, vol. XXVII, Num. 80.

[33] Nöldeke Th., Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887.

Մոմմզենի[34], Ջ. Բուրիի[35], Ն. Բեյնսի[36], Փ. Սայքսի[37], Ռ. Ֆրայի[38], Ռ. Բլոքլու[39], Մ. Դոդջընի և Ս. Լուիի[40], Մ. Էրրինգթոնի[41], Բ. Դիգնասի և Է. Ուինթերի[42], Տ. Դարյայի ուսումնասիրություններում[43]:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված են գիտական նորույթը, սկզբնաղբյուրների և գիտական գրականության վերլուծությունը, հստակեցված են հետազոտության ժամանակագրական շրջանակները:

Առաջին գլուխը՝ «Մեծ Հայքի թագավորության արտաքին և ներքին դրությունը 330-350 թվականներին», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Մեծ Հայքի արտաքին քաղաքական իրադրությունը»,** քննության է առնվում 330-350 թթ. Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականությունը, Հայաստանի նկատմամբ ունեցած նկրտումների և շահերի էությունը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Խոսրով Կոտակ և Տիրան արքաների արտաքին քաղաքականությունը»,** ցույց է տրվում, որ Խոսրով Կոտակն իր արտաքին քաղաքականության մասով հավատարիմ մնաց դեռևս Տրդատ Մեծի օրոք կնքված հայ-հռոմեական դաշինքին, իսկ Տիրանի օրոք աստիճանաբար տեղի էր ունենում արտաքին քաղաքական վեկտորի փոփոխություն. այսինքն՝ հայոց թագավորը մի կողմից հավատարիմ մնաց հայ-հռոմեական դաշինքին, մյուս կողմից՝ փորձեց հարաբերությունները կարգավորել Սասանյան Պարսկաստանի հետ: Սա էականորեն տարբերվում էր Խոսրով Կոտակի որդեգրած արտաքին քաղաքականությունից:

Երրորդ ենթագլխում՝ **«Պետական իշխանության ամրապնդմանն ուղղված ջանքերը»,** ցույց է տրվում Խոսրով Կոտակ և Տիրան Արշակունի թագավորների

[34] Моммзен Т., История римских императоров, Санкт-Петербург, 2002.

[35] Bury J., The date of Battle of Singara, "Byzantinische Zeitschrift", Leipzig, 1896, vol. V.

[36] Baynes N., Rome and Armenia in the Fourth Century, "The English historical review", New York, 1910, October, vol. XXV.

[37] Sykes P., A History of Ancient Iran, London, 1951.

[38] Frye R., The History of Ancient Iran, Munchen, 1983.

[39] Blockley R., The Romano-Persian Peace Treaties of A.D. 299 and 363, "Florilegium", Carleton University, 1984, vol. VI, նույնի՝ The Division of Armenia between The Romans and The Persians at the end of The Fourth Century A.D., "Historia: Zeitschrift für Aelte Geschichte", Germany, 1987, Bd. 36, H. 2, 2nd Qtr.

[40] Dodgeon M., Lieu S., The Roman Eastern Frontier and the Persian Wars A.D. 226-363: A Documentary History, London, 1991.

[41] Errington R., Roman Imperial Policy from Julian to Theodosius (Studies in the History of Greece and Rome), Chapel Hill, 2006.

[42] Dignas B., Winter E., Rome and Persia in Late Antiquity: Neighbours and Rivals, Cambridge, 2007.

[43] Daryaee T., Sasanian Persia, The Rise and Fall of an Empire, London, 2009.

կենտրոնաձիգ պետություն կառուցելուն ուղղված քաղաքականությունը, կենտրոնախույս նախարարների դեմ պայքարը և եկեղեցու ազդեցության թուլացմանն ուղղված քաղաքականությունը, որի նպատակն էր ամրապնդել Մեծ Հայքի թագավորության կենսունակությունը:

Երկրորդ գլուխը՝ «Արշակ Բ և Պապ թագավորների արտաքին և ներքին քաղաքականությունը», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Արտաքին քաղաքական իրադրությունը 350-374 թթ.»,** ներկայացված և վերլուծված են հռոմեա-պարսկական բանակցությունները, հռոմեա-պարսկական պատերազմը և դրանցից բխող քաղաքականությունը, որի նպատակն էր հաստատել երկու հակառակորդներից որևէ մեկի գերակայությունը տարածաշրջանում:

Երկրորդ ենթագլխում՝ **«Արտաքին հարաբերություններն Արշակ Բ-ի և Պապի կառավարման տարիներին»**, բաղկացած է երեք ենթաբաժնից, որտեղ վերլուծված են երկու թագավորների օրոք հայ-հռոմեական և հայ-պարսկական հարաբերությունների էությունը, հայ-պարսկական պատերազմը, պարսկական ավերիչ ասպատակությունները և Մեծ Հայքի ռազմակալումը պարսիկների կողմից, ինչպես նաև երկու հազվագյուտ ունակ գահակալների ողբերգական վախճանը:

Ցույց է տրվում, որ Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականության և արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում Արշակ Բ-ն ու Պապը վարում էին խուսանավելու և տարածաշրջանում հավասարակշռության պահպանման քաղաքականություն:

Երրորդ ենթագլխում՝ **«Կենտրոնաձիգ պետության ամրապնդման քաղաքականությունը»,** կրկին բաղկացած է երեք ենթաբաժնից, որտեղ վերլուծված են պետության ներքին միասնականության վերականգնումը և հայոց գահի համար մղվող պայքարը, Արշակավանի կառուցումը և դրա քաղաքական հետևանքները, Պապի եկեղեցական քաղաքականությունը:

Քննության է առնվում Արշակ Բ-ի կողմից որոշակի զիջումների դիմաց նախարարներին կրկին արքունիքի շուրջ համախմբելու գործընթացը, գահի համար մղվող պայքարում Հռոմի գործակալներ Գնելի ու Տիրիթի չեզոքացումը, Արշակավանի կառուցման պատճառները: Այնուհետև, ցույց է տրվում հայ-պարսկական ավերիչ պատերազմից հետո Պապի իրականացրած քայլերը՝ վերականգնելու փլուզված պետական ապարատը և քայքայված տնտեսությունը, ինչպես նաև նրա եկեղեցական քաղաքականությունը:

Երրորդ գլուխը՝ «Արշակունյաց Հայաստանը ներքին և արտաքին ճգնաժամերի ժամանակաշրջանում (374-387 թթ.)», բաղկացած է կրկին երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Ներքին դրությունը և արտաքին հարաբերությունները Վարազդատի գահակալության շրջանում»,** ներկայացված և վերլուծված են 374-376 թթ. հռոմեա-պարսկական բանակցությունները, Վարազդատ Արշակունու և Մուշեղ Մամիկոնյանի, այնուհետև Մանվել Մամիկոնյանի միջև իշխանության ամրապնդմանն ուղղված սուր մրցակցության պատճառները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Մեծ Հայքի թագավորությունը Մանվել Մամիկոնյանի խնամակալության օրոք (378-384 թթ.)»,** վերլուծված են Մանվել Մամիկոնյանի և պարսկական արքունիքի քաղաքական ծրագրերը, հայ-պարսկական հարաբերությունների վատթարացումը, այնուհետև՝ հռոմեամետ դիրքորոշման որդեգրման գործընթացը:

Երրորդ ենթագլխում՝ **«Արշակ Գ-ի և Խոսրով Վերջինի կառավարման շրջանը. Մեծ Հայքի 387 թ. բաժանումը»,** քննության է առնվում Մեծ Հայքի թագավորության թուլացման պատճառները և պետության 387 թ. բաժանումը, Արշակ Գ-ի և Խոսրով Վերջինի միջև պետական իշխանության ամրապնդմանն ուղղված պայքարը, վերջինիս թագավորության վերամիավորման ասպարեզում իրականացրած քաղաքականությունը:

Եզրակացություն: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքներն ամփոփված են հետևյալ եզրակացություններում.

- Սասանյան Պարսկաստանը, որը ձգտում էր հետ նվաճել 298 թ. Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրով կորցրած տարածքները, ակտիվորեն միջամտում էր Հայաստանի ներքին գործերին և դա համարում էր իր արտաքին քաղաքականության կարևոր մասերից մեկը: Հռոմեական կայսրությունը, որը ձգտում էր պահպանել տարածաշրջանում առկա քաղաքական իրադրությունը, ցանկանում էր Մեծ Հայքի գահին տեսնել իրեն հավատարիմ թագավորի՝ փորձելով իր ազդեցության ոլորտում պահել հայոց թագավորությունը և 330-370-ական թթ. դա համարում էր Արևելքում իր արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: 380-ական թվականներին արտաքին և ներքին հանգամանքներով պայմանավորված կայսրությունն Արևելքում հրաժարվեց ավելի ակտիվ արտաքին քաղաքականությունից՝ որդեգրելով պաշտպանողական մարտավարություն:
- Խոսրով Կոտակն իր արտաքին քաղաքականության մասով հավատարիմ մնաց դեռևս Տրդատ Գ Մեծի օրոք կնքված հայ-հռոմեական դաշինքին և հռոմեացիների օգնությամբ կարողացավ հաղթանակի հասնել հայոց գահի համար մղվող պայքարում: Իր կառավարման վերջում հռոմեացիների օգնության բացակայության և որոշ նախարարների կենտրոնախույս գործունեության պատճառով պարտություն կրեց պարսիկներից: Իրեն հաջորդած Տիրան Արշակունու օրոք ակնհայտ դարձավ, որ տեղի էր ունենում արտաքին քաղաքական վեկտորի փոփոխություն: Վերջինս որդեգրեց ճկուն արտաքին քաղաքականություն՝ հավատարիմ մնալով հայ-հռոմեական դաշինքին և փորձելով հարաբերությունները կարգավորել Պարսկաստանի հետ:
- Ներքին քաղաքականության ասպարեզում Խոսրով Կոտակը և Տիրանը որդեգրեցին պետական իշխանության ամրապնդմանն ուղղված քաղաքականություն: Այդ քաղաքականությունն իրականացնելու ճանապարհին նրանք դիմեցին կոշտ քայլերի, պատժելով կենտրոնախույս նախարարներին և հաջողությունների հասնելով նախարարությունների հետ պայքարում, ինչի արդյունքում «Արքունի Պողոտա»-ի զգալի հատվածի վրա հաստատեցին վերահսկողություն: Ներքին քաղաքականության մեջ Տիրանը Խոսրով Կոտակի գործի իրական շարունակողն էր: Իրենց քաղաքականությամբ նրանք փորձեցին ամրապնդել կենտրոնաձիգ իշխանությունն երկրում: Դա առաջին հերթին պայմանավորված էր արտաքին հարաբերություններում Սասանյան

Պարսկաստանի և Հռոմեական կայսրության ծավալապաշտական նկրտումներին դիմակայելու նպատակով, երբ կենտրոնաձիգ պետության ամրապնդումը առավել քան հրամայական էր: Այդ գործընթացը, ցավոք սրտի, ի վերջո ձախողվեց:

• Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության ծավալապաշտական քաղաքականության համատեքստում, որի նպատակն էր հաստատել երկու հակառակորդներից որևէ մեկի գերակայությունը տարածաշրջանում, Մեծ Հայքն ունեցավ անչափ կարևոր դերակատարություն: Այդ համատեքստում, հայոց թագավորներ Արշակ Բ-ն ու Պապը վարեցին խուսանավման արտաքին քաղաքականություն՝ փորձելով տարածաշրջանում պահպանել երկու տերությունների միջև հավասարակշռությունը: Այդ համատեքստում Արշակ Բ-ը, գիտակցելով իրադրության ողջ բարդությունը, աշխատում էր հարաբերությունները պահել ինչպես Հռոմեական կայսրության, այնպես էլ Սասանյան Պարսկաստանի: Ի վերջո նա հակվեց, որ Հռոմի հետ դաշնակցելու քաղաքականությանը: 363 թ. հետո այդ հավասարակշռությունը խախտվեց հօգուտ Սասանյան Պարսկաստանի, ինչի արդյունքում հայ-պարսկական պատերազմում հայոց թագավորությունը պարտություն կրեց և կենտրոնական պետական ապարատը փլուզվեց, իսկ Արշակ Բ-ն ու հայոց սպարապետը խաբեությամբ գերեվարվեցին և ունեցան ողբերգական վախճան:

• Հայ-պարսկական պատերազմի երկարատև պայքարից հետո Պապը ժամանակավորապես երկարացրեց հայոց պետականության կենսունակությունը՝ հաղթանակի հասնելով պարսիկների նկատմամբ, պատժելով կենտրոնախույս ուժերին և վերականգնելով թագավորության տարածքային ամբողջականությունը: Նրա դիվանագիտական ունակությունները փաստող կարևոր արձանագրում էր նաև եկեղեցու անկախացմանն ուղղված քաղաքականությունը՝ նպաստելով եկեղեցու ազգային բնույթ ձեռք բերելուն, որով փաստորեն, հայոց թագավորությունը զգալի զերծ էր մնում Հռոմեական կայսրության քաղաքական ազդեցությունից: Ցավոք սրտի, իր ինքնուրույն արտաքին քաղաքականություն իրականացնելու պատճառով հայոց երիտասարդ և հազվագյուտ ունակ գահակալը դարձավ Հռոմի և հռոմեամետ ուժերի դավադրության զոհը:

• Ներքին քաղաքականության ասպարեզում Արշակ Բ-ն ու Պապը շարունակեցին Խոսրով Կոտակի և Տիրանի օրոք որդեգրած կենտրոնաձիգ պետության ամրապնդման քաղաքականությունը, ինչն արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում հույժ կարևոր էր, և Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունն ենթարկվեց համակարգային կերպափոխման:

• Արշակ Բ-ը սկզբնապես վերականգնեց պետության ներքին միասնականությունը, այնուհետև հաջողության հասավ գահի համար մղվող պայքարում՝ չեզոքացնելով Հռոմի գործակալներ Գնելին և Տիրիթին:

• Արշակավանի կառուցման նպատակն էր կասեցնել քաղաքականապես և տնտեսապես հզորացած նախարարների և եկեղեցու հետագա հզորացումը ի վնաս կենտրոնական իշխանության: Այդ հակասությունների արդյունքում խստորեն պատժվեց Կամսարականների ընտանիքը:

• Պապը քայլեր ձեռնարկեց պետական ապարատի վերականգնման և ամրապնդման ասպարեզում: Նրա եկեղեցական քաղաքականության նպատակն էր հայ-պարսկական պատերազմի արդյունքում քայքայված տնտեսության վերականգնումը, նպաստելու բնակչության թվաքանակի ավելացմանը, բանակի ներուժի և պետության հզորացմանը: Այդ քայլերն իրականացվեցին ի հաշիվ տնտեսապես հզորացած եկեղեցու:

• Հայոց թագավոր Վարազդատ Արշակունու և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հարաբերությունների սրման դրդապատճառներն երկուսն էին. ա) երկուսն էլ մրցակցում էին իշխանության ամրապնդման համար, բ) Պապ Արշակունու սպանության մեջ մեղավոր էր նաև Մուշեղ Մամիկոնյանը: Արշակունիների հարստության թուլացման պայմաններում Մանվել Մամիկոնյանի քաղաքական ծրագիրն էր հեռացնել Վարազդատին և դառնալ Մեծ Հայքի փաստացի կառավարիչ:

• Մանվել Մամիկոնյանը, օգտվելով Հռոմեական կայսրությունում տիրող խառնակ իրավիճակից, կարողացավ պարսից հովանավորությամբ ամրապնդել իր իշխանությունը Հայաստանում: Սակայն, Սասանյան Պարսկաստանի ծավալապաշտական քաղաքականության պայմաններում նա հմտորեն որդեգրեց հռոմեական կողմնորոշում և դարձավ Արշակունի գահակալների խնամակալ: Մեծ իմաստով, նրա խնամակալության շրջանում հայոց թագավորությունում մի քանի տարի հաստատվեց կայունություն:

• Մանվելի մահվանից հետո վերսկսված պետության թուլացումը և 387 թ. բաժանումը պայմանավորված էին արտաքին և ներքին հանգամանքներով: Երկու գերտերությունների նվաճողական քաղաքականությունը և պարբերաբար շարունակվող պատերազմները վերջնականապես ջլատել էին Մեծ Հայքի ուժերը: Երկրի ներքին թուլացումը մեծապես պայմանավորված էր նաև ավատատիրական հարաբերությունների հետագա խորացումից, որի բացասական դրսևորումներից մեկն էլ նախարարական դասի կենտրոնախույս ձգտումների անկասելի ուժեղացումն էր: Արդյունքում թագավորությունը հայտնվեց քաղաքական երկատվածության մեջ:

• Հայոց թագավորներ Արշակ Գ-ի և Խոսրով Վերջինի միջև պետական իշխանության ամրապնդմանն ուղղված հակամարտությունն ավարտվեց Խոսրովի հաղթանակով: Վերջինիս հաջողվեց կարճ ժամանակով վերամիավորել և վերականգնել պետության երկատված հատվածները (իհարկե, կրճատված սահմաններում): Սակայն արդեն թուլացած թագավորությունը պարսկական ճշնման արդյունքում չկարողացավ դիմադրել, և այս կարևոր քաղաքական ծրագիրը կարճ կյանք ունեցավ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. **Վարշամյան Է.,** Հայաստանը հռոմեա-պարսկական հակամարտության ծիրում. Արշակ Բ-ի արտաքին քաղաքականությունը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, թիվ 1, Երևան, 2020, էջ 49-61:
2. **Վարշամյան Է.,** Մեծ Հայքի թագավորությունը Խոսրով Կոտակի օրոք, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, թիվ 4(15), Երևան, 2021, էջ 13-34:
3. **Վարշամյան Է.,** Մեծ Հայքի թագավորությունը Տիրան Արշակունու օրոք, «Գիտական Արցախ», թիվ 4(11), Երևան, 2021, էջ 64-77:
4. **Վարշամյան Է.,** Պապ Արշակունու ներքին քաղաքականությունը, «Հայագիտական հանդես», թիվ 3-4(57-58), Երևան, 2022, էջ 193-204:
5. **Վարշամյան Է.,** Վարազդատ Արշակունու գահակալության պատմափուլը, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, թիվ 4(21), Երևան, 2022, էջ 63-75:
6. **Վարշամյան Է.,** Հայոց թագավոր Արշակ Բ-ի ներքին քաղաքականությունը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, թիվ 1(17), Երևան, 2022, էջ 7-25:
7. **Վարշամյան Է.,** Պապ Արշակունու արտաքին քաղաքականությունը, «Հայագիտական հանդես», թիվ 5(59), Երևան, 2022, էջ 158-184:

ВАРШАМЯН ЭДГАР ГЕВОРГОВИЧ

ВНУТРЕННЯЯ И ВНЕШНЯЯ ПОЛИТИКА ВЕЛИКОЙ АРМЕНИИ в 330-387 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 17-ого июля 2023 г. в 13^{00} часов на заседании Специализированного совета по Истории Армении 004 ВАК РА, при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию внутренней и внешней политики Великого Армянского царства в 330-387 гг. Цель диссертации - выявить и осветить завоевательную политику Сасанидской Персии и Римской империи против Армении в 330-387 годах, пользуясь научно-историческими методами, проанализировать особенности внешней и внутренней политики, проводимой армянскими царями, осветить усилия, направленные на укрепление централизации власти, а также указать на существующие проблемы и наметить пути их решения.

Научная работа состоит из введения, трех глав, которые в свою очередь делятся на подглавы, заключения, списка использованных источников и литературы. Во введении обосновываются актуальность, цель и проблематика темы, приводится научная новизна, анализ первоисточников и научной литературы, уточняются хронологические рамки исследования.

В первой главе "Внешнее и внутреннее положение Великой Армении в 330-350 годах" представлена сущность амбиций и интересов Сасанидской Персии и Римской империи по отношению к Армении, особенности внешней политики армянских царей Хосрова Котака и Тирана Аршакуни и политика, направленная на построение

централизованного государства, борьба с несогласием министров и политика, направленная на ослабление влияния церкви.

Во второй главе „Внешняя и внутренняя политика царей Аршака II и Папа" рассмотрен характер армяно-римских и армяно-персидских отношений в период правления Аршака II и Папа, представлена армяно-персидская война, разрушительные персидские нашествия и завоевание Великой Армении персами, а также трагическая смерть двух редко одаренных правителей. Показано, что в условиях захватнической политики Сасанидской Персии и Римской империи и сложной внешнеполитической обстановки Аршак II и царь Пап проводили политику уклонения и сохранения равновесия в регионе. Анализируются восстановление внутреннего единства государства и борьба за армянский престол, строительство Аршакавана и его политические последствия, церковная политика Папа.

В третьей главе "Аршакунийская Армения в период внутренних и внешних кризисов (374-387)" представлены римско-персидские переговоры 374-376 гг., причины острой конкуренции в борьбе за престол между Вараздатом Аршакуни и Мушегом Мамиконяном,а затем и Манвелом Мамиконяном, царство Великая Армения под опекой Манвела Мамиконяна, причины ослабления царства и раскол государства в 387 году, борьба Аршака III и Хосрова Последнего за укрепление государственной власти, проводимая последним политика воссоединения царства.

Основные положения и результаты диссертации обобщены в заключении.

VARSHAMYAN EDGAR GEVORG

THE DOMESTIC AND FOREIGN POLICY OF THE KINGDOM OF GREATER ARMENIA 330-387 A.D.

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The Defense of the Disseration will be held on July 17, 2023, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institue of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The dissertation is dedicated to the study of the domestic and external policy of the Kingdom of Greater Armenia in 330-387 A.D. The research aims to identify and explain the conquest policy of Sassanid Persia and the Roman Empire against Armenia in the years 330-387 by implementing historical methods, to analyze the characteristic features of the Armenian kings' foreign and domestic policies, to highlight efforts aimed at strengthening centripetal power, and to point out existing problems and outline possible solutions.

The research paper consists of an introduction, three chapters, which in turn is comprised of sub-chapters, conclusion, and list of used internet sources and literature.

In the introduction, the relevance of the research, aim and objectives are justified, the scientific novelty, analysis of original sources, and scientific literature are offered; and the chronological framework of the research is defined.

Chapter I entitled "External and domestic situation of the Kingdom of Greater Armenia in 330-350" presents the essence of Sasanian Persia's and the Roman Empir's ambitions and interests towards Armenia, the distinctive characteristics of the Armenian kings Chosroes Kotak and Tiran

Arsacid's foreign policy, and the policy aimed at building a centripetal state against centrifugal ministers, and the fight and measures aimed at diminishing the dominance of the church.

The nature of Armenian-Roman and Armenian-Persian relations during the reigns of Arsaces II and Pap, the Armenian-Persian war, the destructive Persian invasions and the conquest of Great Armenia by the Persians, as well as two tragic deaths of rarely skilled rulers are discussed in Chapter II entitled "Foreign and domestic policy of kings Arsaces II and Pap" It is demonstrated that, in the context of Sasanian Persia's and the Roman Empire's acquisition policies, as well as the convoluted international political environment, Arsaces II and Pap pursued a policy of evasion and maintaining balance in the region. The restoration of the state's internal unity and the fight for the Armenian throne, the construction of Arshakavan and its political ramifications, and Pap's church policy are all discussed.

Chapter III entitled "Arsacid's Armenia in the period of domestic and external crises (374-387)" discusses the Roman-Persian negotiations in 374-376, the reasons for the sharp competition between Varazdat Arsacid and Mushel Mamikonian, and then Manvel Mamikonyan with the objective of strengthening the authority, the kingdom of Great Armenian under the guardianship of Manuel Mamikonian, the reasons for the weakening of the kingdom and the state in 387, the division, the struggle between Arsaces III and Chosroes the Last to strengthen the state power, the policy implemented by the latter in the arena of reunification of the kingdom.

The conclusion succinctly summarizes the main findings of the research.